

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Զարկային և մաքսային օրենսդրության նորություններ	2
1.1 Օրենքներ -----	2
1.2 ՀՀ կառավարության որոշումներ -----	3
2. Զարկային օրենսդրություն -----	6
3. Զարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ	7
3.1 Ավտոմատացման և ծառայողական քննությունների -----	7
3.2 Զարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ (մայիս) -----	8
3.3 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ (մայիս) -----	9
3.4 Զարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ (հունիս) -----	10
3.5 Զարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ (հունիս) -----	11

1. ԶԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 | Օրենքներ

Փաստաթուղթ	«Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	10.06.2014, ՀՕ-24-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 31 (1044), 18.06.2014թ
Ուժի մեջ է	28.06.2014

Համառոտ նկարագիր



Օրենքում կատարված փոփոխության համաձայն, այսուհետ 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաները ակցիզային հարկով հարկման ենթակա չեն:

Փաստաթուղթ	«ՀՀ մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18.06.2014, ՀՕ-46-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1045), 25.06.2014թ
Ուժի մեջ է	01.01.2015

Համառոտ նկարագիր

Օրենսգրքում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, համաձայն որոնց՝


1. օրենսգրքով տրվել են մի շարք հասկացությունների սահմանումներ,
2. հայտարարագրման լիարժեք ավտոմատացման նպատակով սահմանվել է նախնական տեղեկատվության (կրճատ հայտարարագիր) ներկայացման պահանջը,
3. սահմանվել են մաքսային միջնորդի կողմից որպես ներկայացուցիչ հանդես գալու, ինչպես նաև ներկայացված հայտարարագրի ճշտության համար պատասխանատվության հստակ տարանջատման, մաքսային միջնորդի պատասխանատվության երաշխիքի պարտադիր առկայության վերաբերյալ դրույթները,
4. կարգավորվել են լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակի ստացման, ինչպես նաև դրանց կողմից կիրառվող հատուկ ընթացակարգերի, դրանց ներկայացվող պահանջների և չափանիշների և վերջիններիս գործունեության հետ կապված այլ հարաբերություններ,
5. հստակեցվել են բանկային երաշխիքի առկայության դեպքում մաքսային վճարների վճարման ժամկետի վերաբերյալ դրույթները,
6. սահմանվել են ձևակերպումներից հետո ապրանքների բացթողման ժամկետները,
7. օրենսգրքում ամրագրվել են մաքսային ձևակերպումների ժամանակ ռիսկերի կառավարման համակարգի վերաբերյալ դրույթները,
8. վերանայվել են ապրանքի ծագման երկրի կանոնների վերաբերյալ դրույթները՝ մաքսային մարմինների կողմից ապրանքների ծագման վկայականների տրամադրման նպատակով:

Փաստաթուղթ	«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.06.2014, ՀՕ-71-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 34 (1047), 30.06.2014թ
Ուժի մեջ է	01.07.2014

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված փոփոխությունները պայմանավորված են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով: Մասնավորապես, օրենքում կատարված կազմափոխումները կապված են պարտադիր կուտակային կենսաթոշակների համակարգի վերանայման հետ: Այդ առնչությամբ

յամբ ճշգրտվել են «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նվազեցումները, իսկ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում եկամտային հարկի հաշվարկման և հաշվարկների ներկայացման դրույթները խմբագրվել են՝ սոցիալական վճարի ներդրման առումով:



1.2 | ՀՀ կառավարության որոշումներ

Փաստաթուղթ	«ՀՀ Կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 846-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26.06.2014, N 646-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 35 (1048), 07.07.2014թ
Ուժի մեջ է	01.07.2014

Համառոտ նկարագիր

Որոշման մեջ կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացում, համաձայն որոնց՝

1. Հետաձգվել է որոշման հավելված 2-ով նախատեսված ՀԴՄ-ի կտրոնի վրա գնված ապրանքից կամ ստացված ծառայությունից տարբերվող ապրանքի կամ ծառայության անվանման տպագրման դեպքում՝ վերջիններս ՀԴՄ-ների շահագործման կանոնների խախտում դիտարկելու դրույթի ուժի մեջ մտնելու ժամկետը: Մասնավորապես, նշված դրույթը կգործի:

ա. 2014 թվականի նոյեմբերի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով 500.0 մլն դրամ

2. Հետաձգվել է նաև ապրանքի (ծառայության) անվանման, գնվող ապրանքի քանակի և դրա չափման միավորի բացակայությունը ՀԴՄ-ի շահագործման կանոնների խախտում համարելու դրույթի կիրառության ժամկետը:

(ներառյալ ավելացված արժեքի հարկը) և ավելի իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,

բ. 2015 թվականի ապրիլի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով 58.35 մլն դրամից մինչև 500.0 մլն դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,

գ. 2016 թվականի հունվարի 1-ից՝ վերոնշյալ «ա» և «բ» պարբերություններում չնշված հարկ վճարողների համար:

Փաստաթուղթ	«ՀՀ Կառավարության 2013 թվականի օգոստոսի 22-ի N 873-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	19.06.2014, N 626-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 36 (1049), 09.07.2014թ
Ուժի մեջ է	10.07.2014

Համառոտ նկարագիր

ՀՀ կառավարության 2013թ. օգոստոսի 22-ի «Հարկային և մաքսային ծառայությունների մրցութային և ատեստավորման հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կազմը, աշխատակարգը, անդամների թվաքանակը և անդամներին ներկայացվող չափանիշներ

ը, հարկային և մաքսային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային անցկացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 873-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություն-



ներ և լրացում՝ նպատակ ունենալով նշված կարգի որոշ դրույթներ համապատասխանեցնել «Հարկային ծառայության մասին» և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին:

Մասնավորապես վերանայվել են թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցութային անցկացման ժամանակ հարցազրույցի

արդյունքների ամփոփման ընթացակարգի դրույթները: Խմբագրվել են նաև մրցութային մասնակցի հետ հարցազրույցի ավարտից հետո արդյունքների գնահատմանը և ամփոփմանը վերաբերող դրույթները՝ ապահովելով փակ գաղտնի քվեարկության անցկացման համար անհրաժեշտ պայմաններ:

Փաստաթուղթ	«ՀՀ Կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 5-ի N968-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և թույլտվություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	03.07.2014, N 662-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր №37(1050), 16.07.2014թ.
Ուժի մեջ է	17.08.2014

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից օրվա ընթացքում **հսկիչ-դրամարկղային մեքենաներով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի մասին տեղեկությունները ցանցային կապի միջոցներով հարկային մարմին ուղարկելը պարտադիր է՝**

ա. 2014 թվականի օգոստոսի 1-ից՝ 2013

թվականի արդյունքներով 30.0 մլն դրամից մինչև 58.35 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,

բ. 2014 թվականի հոկտեմբերի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով 10.0 մլն դրամից մինչև 30.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար,

գ. 2015 թվականի հունվարի 1-ից՝ 2013 թվականի արդյունքներով մինչև 10.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար:

Նույն որոշմամբ սահմանվել են նաև նշված խմբերի հարկ վճարողների համար **հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գները**, մասնավորապես.

1. «ա» պարբերությունում նշված հարկ վճարողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին է սահմանվել առավելագույնը 150 հազ. դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

2. «բ» պարբերությունում նշված հարկ վճարողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին է սահմանվել առավելագույնը 120 հազ. դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

3. «գ» պարբերությունում նշված՝

ա. 5.0 մլն դրամից մինչև 10.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին է սահմանվել առավելագույնը 80 հազ. դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

բ. մինչև 5.0 մլն դրամ իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին է սահմանվել առավելագույնը 60 հազ. դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

4. գյուղերում (բացառությամբ սահմանամերձ գյուղերի) հաշվառված և փաստացի գործունեություն իրականացնող սույն կետի 1-3-րդ ենթակետերում նշված հարկ վճարողների համար հսկիչ-դրամարկղային մեքենաների իրացման գին սահմանվել նույն ենթակետերում նշված համապատասխան գների 50 տոկոսը (այս պայմանով տրամադրվում է ոչ ավել քան 1 հսկիչ-դրամարկղային մեքենա),

5. Որոշմամբ սահմանվել է, որ ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբե-

րի 17-ի «ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» N 713 որոշմամբ հաստատված ցանկում ներառված սահմանամերձ գյուղերում հաշվառված և փաստացի գործունեություն իրականացնող հարկ վճարողներին հսկիչ-դրամարկղային



մեքենաներ տրամադրվում են անվճար (այս պայմանով տրամադրվում է ոչ ավել քան 1 հսկիչ-դրամարկղային մեքենա):

Սույն որոշման գործողությունը տարածվում է **2014թ. հունիսի 1-ից** հետո ծագող հարաբերությունների վրա:

1.3 Պաշտոնական պարզաբանումներ, հրահանգներ



Փաստաթուղթ	«ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2012 թվականի մարտի 1-ի N12 պաշտոնական պարզաբանման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	30.06.2014, N1
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N16(495) 15.07.2014
Ուժի մեջ է	30.06.2014

Համառոտ նկարագիր

Պարզաբանմամբ սահմանվել է, որ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (06.12.2011թ., ՀՕ-334-Ն) ընդունմամբ հանձնարարության կամ պրինցիպալի անունից հանդես գալու

պայման նախատեսող գործակալության պայմանագրերի հիման վրա կնքվող գործարքների մասով գործակալի կամ հանձնակատարի վարձատրությունը, որպես հարկվող շրջանառություն դիտարկելու առումով, 2003 թվականի հունվարի 1-ից, ըստ էության, փոփոխության չի ենթարկվել:

Փաստաթուղթ	«Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունից արտոնագրային վճարի հաշվարկման» ՀՀ ֆինանսների նախարարի պաշտոնական պարզաբանում
Ամսաթիվը և համարը	07.07.2014, N2
Հրապարակումը	ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր N16(495) 15.07.2014
Ուժի մեջ է	07.07.2014

Համառոտ նկարագիր

Ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) միջոցով ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման ժամանակ ավտոմեքենաների փոխարինվող մասերի և պարագաների (սյուլթերի) օտարման գործարքների մասով «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի դրույթները կիրառելի չեն և այդ մասով հարկերը հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով: Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մասով հաշվարկվում և վճարվում է արտոնագրային վճար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածով:

ծով սահմանված կարգով:

Հրապարակային պայմանագրով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում ավտոմեքենաներ իրացնողի կողմից ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման (այդ թվում՝ անհատույց) ծառայությունների մասով հաշվարկվում և վճարվում է արտոնագրային վճար «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի N 8 հավելվածով սահմանված կարգով, իսկ ավտոմեքենաների փոխարինվող մասերի և պարագաների (սյուլթերի) օտարման մասով հարկերը հաշվարկվում են օրենքով սահմանված կարգով:



2. ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթ	«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	27.06.2014, ՀՕ-74-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր N° 34 (1047), 30.06.2014թ
Ուժի մեջ է	01.07.2014

Համառոտ նկարագիր

Օրենքում կատարված լրացման համաձայն՝ **նվազագույն ամսական աշխատավարձի** չափի մեջ **չեն ներառվում** աշխատավարձից վճարվող **հարկերը**, նպատակային սոցիալական վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները և խրախուսման այլ վճարները:



Փաստաթուղթ	«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	18.06.2014, ՀՕ-45-Ն
Հրապարակումը	ՀՀ պաշտոնական տեղեկագիր № 32 (1045), 25.06.2014թ
Ուժի մեջ է	01.07.2014

Օրենքում կատարված լրացմանը համաձայն՝ տարեկան ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել միայն աուդիտի ենթարկվելուց հետո՝ աուդիտորական եզրակացության հետ, **բացառությամբ խոշոր կազմակերպությունների, որոնց ֆինանսական հաշվետվությունները կարող են հրապարակվել առանց աուդիտորական եզրակացության:** Սույն օրենքի իմաստով խոշոր կազմակերպություն է համարվում այն կազմակերպությունը,

որը բավարարում է հետևյալ ցուցանիշներից առնվազն մեկին՝

ա. հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) գործունեությունից հասույթը գերազանցում է մեկ միլիարդ դրամը.

բ. հաշվետու տարվա (որի համար պետք է կազմվեն ֆինանսական հաշվետվությունները) վերջի դրությամբ ակտիվների հաշվեկշռային արժեքը գերազանցում է մեկ միլիարդ դրամը:



3. ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԴՐՎԱԳՆԵՐ

3.1 Ակնարկ գանգատարկումների և ծառայողական քննությունների

2014 թվականի մայիսի 20-ից մինչև հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ընդունվել է 33 որոշում, որից բավարարվել է 20-ը, բավարարվել է մասնակի 1-ը, մերժվել է 11-ը, կասեցվել է 1-ը:

2014 թվականի հունիսի 20-ից մինչև հուլիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից

ընդունվել է 40 որոշում, որից բավարարվել է 26-ը, բավարարվել է մասնակի 5-ը, մերժվել է 7-ը, կարճվել է 2-ը:

20.06.2014թ-ից մինչև 20.07.2014թ-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային ծառայության մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկվել են թվով 11 ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որոնց արդյունքում թվով 12 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության:



3.2 | Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ¹

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2014թ.		
			Մայիս	Հունվար-Մայիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-մայիս) % ²
1	ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	90,049.6	407,579.2	104.8
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	87,777.2	395,092.1	104.2
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	37,243.8	166,691.6	106.7
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	8,593.2	49,660.5	95.9
1.1.3	Եկամտային հարկ ³	մլն դրամ	26,932.1	115,515.4	109.0
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	4,649.9	16,800.7	148.4
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,194.0	6,386.6	156.8
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	567.7	2,673.7	99.5
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	295.9	1,274.7	26.9
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	5,341.7	19,542.2	105.7
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁴	մլն դրամ	2,959.0	16,546.7	69.8
1.2	Պետական տուրք	մլն դրամ	2,272.3	12,487.1	128.8
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	193 092	963 867	102.5
2.1	Արտահանում	մլն դրամ	46 368	237 189	102.7
2.2	Ներմուծում	մլն դրամ	146 724	726 678	102.4

¹ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

² Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

³ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

⁴ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), բնապահպանական և բնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարզեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱՎ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օդիների համար քվոտան)

3.3 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2014թ. մայիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1453
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1130
1.2	Իրավաբանական անձ	հատ	323
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	7 191
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	133
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	729.7
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար-մայիս 8242
5.1	Բավարարված	հատ	958
5.2	Մերժված	հատ	32
5.3	Քննության ընթացքում գտնվող	հատ	7757
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	5.240,8
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	12802
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	247,3
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1479
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	5.508,1
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	119
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	362,0
10	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	490
10.1	Ավարտված	հատ	7
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	7
10.3	Կասեցված	հատ	12
11	Քննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	921.8,0

3.4 | Հարկային և մաքսային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ տվյալներ⁵

Գ/Գ	Ցուցանիշ	Զափման միավոր	2014թ.		
			Հունիս	Հունվար-Հունիս	Աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ (հունվար-հունիս) % ⁶
1	ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք	մլն դրամ	91,896.0	499,475.2	104.3
1.1	Հարկային եկամուտներ, այդ թվում՝	մլն դրամ	88,055.8	483,147.9	103.4
1.1.1	ԱԱՀ	մլն դրամ	37,866.3	204,557.9	107.5
1.1.2	Շահութահարկ	մլն դրամ	12,370.6	62,031.1	94.1
1.1.3	Եկամտային հարկ ⁷	մլն դրամ	24,232.6	139,748.0	108.6
1.1.4	Ակցիզային հարկ	մլն դրամ	3,760.6	20,561.3	148.8
1.1.5	Շրջանառության հարկ	մլն դրամ	1,239.2	7,625.9	148.4
1.1.6	Արտոնագրային վճարներ	մլն դրամ	694.7	3,368.4	97.5
1.1.7	«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված գործունեության տեսակներից հաստատագրված վճարներ	մլն դրամ	335.2	1,609.9	27.9
1.1.8	Մաքսատուրք	մլն դրամ	4,883.1	24,425.4	104.3
1.1.9	Այլ հարկային եկամուտներ ⁸	մլն դրամ	2,673.4	19,220.1	63.0
1.2	Պետական տուրք	մլն դրամ	3,840.2	16,327.3	137.6
2	Արտաքին առևտրի ապրանքաշրջանառությունը, այդ թվում՝	մլն դրամ	183 542	1 147 259	101.4
2.1	Արտահանում	մլն դրամ	53 699	290 857	101.6
2.2	Ներմուծում	մլն դրամ	129 843	856 402	101.3

⁵ Ներառված են ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով եկամուտները

⁶ Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ

⁷ Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները

⁸ (Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ գույքահարկը և հողի հարկը (պետական բյուջե հաշվեգրվող), քնապահպանական և քնօգտագործման պարտադիր վճարները, ճանապարհային վճարները, պարզեցված հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարները, Հարկերի մասին ՀՀ օրենքով սահմանված տուգանքները (25.1, 25.2, 26, 27, 28, 30, 31 հոդվածների մասով), բենզինի և դիզելային վառելիքի հաստատագրված վճարը, ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարը, ՀՀ տարածք ներմուծվող ԱՏԳ ԱՎ 2208 ապրանքային ծածկագրին դասվող օղիների համար քվոտան)



ևս մեկ քայլ՝

ԲԻԶՆԵՍԻՆ ԸՆԿՈՐԱԾ

Եռամսյա պարբերականությամբ
 հրատարակվում են
 «Հարկառու» և «Մաքսատու» ամսագրերը

3.5 | Հարկային և մաքսային վարչարարության վերաբերյալ վիճակագրական տվյալներ

Հ/Հ	Ցուցանիշ	Զափման միավոր	2014թ. հունիս
1	Նոր գրանցված (ՀՎՀՀ ստացած) հարկ վճարողների թիվ, այդ թվում՝	հատ	1542
1.1	Ֆիզիկական անձ	հատ	1197
1.2	Իրավաբանական անձ	հատ	345
2	Արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների թիվ	հատ	6 404
3	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) թիվ	հատ	102
4	Պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ավարտված ստուգումների (ԲՍ) արդյունքում առաջադրված գումարներ	մլն դրամ	937.1
5	Գանձման որոշումների և սնանկության հայցերի թիվ, այդ թվում՝	հատ	2014թ. հունվար-հունիս 10050
5.1	Բավարարված	հատ	1078
5.2	Մերժված	հատ	35
5.3	Ջննդության ընթացքում գտնվող	հատ	9303
6	Գանձման որոշումներով և սնանկության հայցերով գանձված գումարներ	մլն դրամ	6.049,7
7	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների թիվ	հատ	15794
7.1	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումների համաձայն փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	305,5
8	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումների թիվ	հատ	1761
8.1	Հարկ վճարողների գույքի վրա դրված արգելադրումներով փաստացի գանձված գումարներ	մլն դրամ	6.395,1
9	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի թիվ	հատ	133
9.1	Իրավախախտումների հայտնաբերման ու վարչական վարույթների իրականացման վարչության կողմից հարուցված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	628,9
10	Ջննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի թիվ, այդ թվում՝	հատ	563
10.1	Ավարտված	հատ	10
10.2	Մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված	հատ	10
10.3	Կասեցված	հատ	14
11	Ջննչական վարչության կողմից վարույթ ընդունված քրեական գործերի արդյունքում վերականգնված գումարներ	մլն դրամ	1.078,2

www.customs.am

**բոլոր հարցերն
ունեն իրենց
պատասխանները՝**

www.taxservice.am